

Փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցության ծրագիր

Արցախի ներդրումային հիմնադրամը փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցության պետական ծրագրի շրջանակներում իրականացնում է փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցության ծրագիր:

Ծրագրի նպատակներն են ՓՄՁ սուբյեկտներին գործունեությանը և զարգացմանը խոչընդոտող հիմնախնդիրների՝ գործարար տեղեկատվության և խորհրդատվության ստացման ու կադրերի մասնագիտական ուսուցման հարցերում առկա դժվարությունների հաղթահարման նպատակով ՓՄՁ սուբյեկտների համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերման մատչելիության ապահովումն ու խորհրդատվական ծառայություններից օգտվելու հնարավորությունների ընդլայնումը:

Աջակցության ուղղություններն են՝

- ՓՄՁ սուբյեկտների պետական գրանցում,
- գործընկերների որոնում ու նրանց հետ գործարար կապերի հաստատում,
- ֆինանսական միջոցների ներգրավում և կառավարում,
- գործարար և ներդրումային ծրագրերի մշակում,
- հաշվապահական հաշվառում,
- հաշվապահական (ֆինանսական) հաշվետվությունների կազմում ու ներկայացում,
- ստանդարտացում, համապատասխանության հավաստում,
- մտավոր սեփականության պաշտպանություն,
- հարկային և մաքսային ձևակերպումներ,
- այլ նպատակային ուղղություններ:

Աջակցության ձևերն են՝

1. պարբերականների հրատարակում՝ ներկա ժամանակաշրջանում տնտեսության գերակա ճյուղերի և զարգացման ուղղությունների վերաբերյալ,
2. մասնագիտական և տեղեկատվական բնույթի գործարար ուղեցույցների հրատարակում,
3. հիմնադրամի կողմից իրականացվող առանձին ծրագրերի մասին՝
 - ✓ տեղեկատվական բուկլետների հրատարակում,
 - ✓ ՋԼՄ-ներում նյութերի տպագրում,
 - ✓ մամուլի ասուլիսների կազմակերպում,
 - ✓ Հիմնադրամի ինտերնետային էջում տեղեկատվության տեղադրում,
 - ✓ տեղեկատվության տարածման օրենսդրությամբ չարգելված այլ ձևեր
4. ՓՄՁ սուբյեկտներին սահմանված աջակցության ուղղություններով միանգամյա խորհրդատվության տրամադրում՝ ծրագրի փորձագետների կողմից,
5. խմբային հանդիպումների կազմակերպում՝ ՓՄՁ սուբյեկտների հետ, հիմնականում ԼՂՀ շրջաններում,

6. ՓՄՁ սուբյեկտների վերաբերյալ տեղեկատվական բազայի ստեղծում, հավաքագրված տեղեկատվության ամփոփում միասնական էլեկտրոնային համակարգում:

Ընթացակարգը

Քայլ 1 Աջակցության տվյալ ձևից օգտվելու համար ՓՄՁ սուբյեկտը դիմում է Արցախի ներդրումային հիմնադրամի գրասենյակ, որտեղ լրացնում է պետական աջակցություն ստանալու հայտ՝ նշելով գործարարության ոլորտում իր կողմից ակնկալվող խորհրդատվական աջակցության տեսակը:

Քայլ 2 Հիմնադրամի կոմիտեն քննարկում է հայտը և որոշում կայացնում աջակցության տրամադրման մասին:

Քայլ 3 Հիմնադրամի կողմից ընտրություն է կատարվում գործարար խորհրդատվական ծառայություններ մատուցող կազմակերպությունների միջև, որոնց հետ կնքվում է համագործակցության պայմանագիր և ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվում է գործարար խորհրդատվություն: